

Արձանագրություն թիվ 2

2021 թվականի փետրվարի 10-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ <<Բ>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, ուսուցիչներ, դասղեկ Ար Մուրադյանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջ. Գևորգյանը:

Օրակարգում

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:
2. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:
3. Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին- 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփման հարցը:

Էլույթ ունեցավ դասղեկ Ար. Մուրադյանը՝ մեկ առ մեկ ներկայացնելով առարկաները և գնահատականները: Նա նշեց, որ 1-ին կիսամյակում դասարանում չկա գերազանցիկ.

11 ուսման առաջավորներ

1. Այվազյան Էրիկ Վահագնի
2. Ավազյան Հրայր Վաչագանի
3. Բաղդասյան Դավիթ Ռոբերտի
4. Գալստյան Անդրանիկ Սերոբի
5. Գալստյան Աննա Բենիկի
6. Կարապետյան Սյուզի Խաչիկի
7. Հովհաննիսյան Ռենա Գարիկի
8. Պետրոսյան Ինգա Պետրոսի
9. Մաթևոսյան Աստղիկ Նորայրի
10. Սարգսյան Էլեն Ցոկլյակի
11. Վարդանյան Պետրոս Մկրտչի

Որակական ցուցանիշը՝ 47%, առաջադիմություն՝ 100%:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տեղեր և գրենական պիտույքներ, օգնել հետ մնացող աշակերտներին:

2. Լսեցին - 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:

Ելույթ ունեցավ դասղեկ Ար. Մուրադյանը, ով ներկայացրեց 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում 8-րդ <<Բ >> դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր՝ 2-րդ կիսամյակի անելիքներն ու խնդիրները: Ար. Մուրադյանը առաջարկեց 2-րդ կիսամյակում մեծ ուշադրություն դարձնել կարգապահությանն ու առաջադիմությանը՝ շտկելով նախորդ կիսամյակի սխալները և բացթողումները: Ելույթ ունեցավ տնօրենի տեղակալ Ջ. Գևորգյանը՝ նշելով, որ դասարանն ունի լուրջ կարգապահական խնդիր՝ պայմանավորված տղաների վարքային խնդիրներով, հորդորեց խնդրահարույց աշակերտների՝ Անդրանիկի, Վարուժանի, Պետրոսի, Հրայրի, Վաչագանի ծնողներին ուշադիր և հետևողական լինել իրենց երեխաների կարգապահության նկատմամբ:

Դասղեկ Ար. Մուրադյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների առաջադիմության հիմնախնդիրների հարցում: Դասղեկը հորդորեց ծնողներին սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ, ինչը կխթանի սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը ճիշտ ու արդյունավետ կազմակերպելուն: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքները, լավ պահել, պահպանել դասագրքերը, մասնավորապես չկորցնել դրանք:

Որոշեցին.- Ծնողները խոստացան հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հաճախակի այցելել դպրոց, կապ հաստատել ուսուցիչների, դասղեկի, տնօրենի հետ:

3. Լսեցին - Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Ար. Մուրադյանը նշեց, որ 2-րդ կիսամյակում ևս դպրոցը աշխատելու է վեցօրյա ռեժիմով /9-00--13-55/: Նա հորդորեց ծնողներին հետևել, որ իրենց երեխաներն հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավելագույնս ուշադիր լինել նրանց հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝  / Հրանուշ Ավագյան
Քարտուղար՝  / Տաթևիկ Աբրահամյան